

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՌԱՏԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ  
ՏԱՐԵԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ  
/ 01.01.2018թ-31.12.2018թ/

2019թվականի հունվարի 29-ին Արմավիրի մարզի Առաքաշեն գյուղական համայնքի ղեկավարի փարեկան հաշվետվությանը ներկա էին մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության ՀԳՄՍՍ հարցերով համակարգման բաժնի պետ՝Գևորգ Գևորգյանը, համայնքի ավագանու անդամներ, դպրոցի, մանկապարտեզի, համայնքապետարանի աշխատակիցներ և համայնքի թվով34 բնակիչներ:

ՀՀ Արմավիրի մարզի Առաքաշեն համայնքի ղեկավարը ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներով, համայնքի ղեկավարի աշխատակազմի, ավագանու և համայնքապետարանի ենթակայության փակ գտնվող աշխատակիցների միջոցով իրականացրել է իրեն վերապահված իրավասությունների շրջանակներում իր լիազորությունները:

Համայնքում փարվա ընթացքում կայացել է ավագանու 10 նիստ,ընդունվել է 55 որոշում, որոնք ներկայացվել են Արմավիրի մարզպետարան: Համայնքի կողմից կայացվել է փարբեր բնույթի 78 որոշում, 38 կարգադրություն,որոնք նույնպես ներկայացվել են Արմավիրի մարզպետարան: Ընթացիկ ժամանակահատվածում համայնքապետարանը սփացել է 303 գրություն, որից պատասխանվել է 269 պաշտոնական գրություն, բնակիչներին փրվել է 266 փեղեկանք:

1. Քաղաքացիների իրավունքների պաշտպանության բնագավառում

01.01.2018թ- 31.12.2018թ ընթացքում համայնքապետարան է դիմել 132բնակիչ, դիմումադրերերի հարցերին փրվել է լիարժեք պատասխան: Համայնքապետարանը, համայնքի բնակիչների շահերը պաշտպանելու նպատակով, իր միջնորդությամբ հանդես է եկել անձնագրային բաժնում, նոտարական գրասենյակում, կադաստրային փարածքային սփորաբաժնում:

## 2. Ֆինանսների բնագավառում

Կազմվել և համայնքի ավագանու հաստատմանն է ներկայացվել համայնքի 2019թվականի տարեկան բյուջեի նախագիծը, փնտրվել է համայնքի 2018թվականի բյուջեի մուտքերը և նպատակային օգտագործումը:

### ԵԿԱՄՈՒՏՆԵՐ

1. Հողի հարկ	6254.9 հազ. դրամ
2. Գույքահարկ	4725.1 հազ. դրամ
3. Գույքի վարձ. վճար	1140.0 հազ. դրամ
4. Դոտացիա	46722.5 հազ.դրամ
5. Տարեսկզբի ազատ մնացորդ	844.5հազ. դրամ
6. Հողի վարձ. գումար	124.5 հազ.դրամ
7. Տեղական տուրքեր	90.0 հազ.դրամ
8. Տեղական վճար	2199.2.0 հազ.դրամ
9. Հողի օտարումից մուտքեր	9964.0 հազ. դրամ

### ԾԱԽՍԱՅԻՆ ՄԱՍ

1.Տեղական ինքնակառավարում	26843.3 հազ. դրամ
2.Համայնքային այլ ծառայություն	2498.6 հազ. դրամ
3.Կրթություն և մշակույթ	5322,0հազ. դրամ
4. Սոց. օգնություն	1110.0հազ. դրամ
5. Այլ մշակույթային ծառայություններ	1365,9հազ. դրամ
6. Նախադպրոցական ուսուցում	19680,4հազ. դրամ
7.աղբահանություն	1272,0 հազ. դրամ
8. Առողջապահություն	151,5 հազ.դրամ
9.Փողոցների լուսավորություն	587,4հազ.դրամ



10. Համայնքի ջրամատակարարում 1201,3 հազ. դրամ

11. Փողոցների լուսավորություն 587,4 հազ. դրամ

Համայնքապետարանը աշխատակազմի աշխատակիցների աշխատավարձերի և եկամտային հարկի գծով հաշվետու ժամանակաշրջանում ոչ մի պարտք չունի:

### 3. Պաշտպանության բնագավառում

Համայնքապետարանը տարածքային զինկոմիսարիատից ստացած ծանուցագրերը ժամանակին հասցնում է հասցեատիրոջը և հետևում է, որ ժամանակին ներկայանան զինկոմիսարիատ:

Հարուկ ուշադրություն է դարձվում պատերազմի վերերանների սոցիալական խնդիրների լուծմանը: Երիտասարդության շրջանում մեծ աշխատանքներ են տարվում ռազմահայրենասիրական ոգով դաստիարակելու գործում:

### 4. Քաղաքաշինության և հողօգտագործման բնագավառում

Համայնքում մասնագետների մասնակցությամբ տրվել է անվճար խորհրդատվություն բույսերի պաշտպանության հարցում:

### 5. Կոմունալ տնտեսություն և բարեկարգման բնագավառում

Առավել մաքուր և հրապուրիչ շրջակա միջավայրով համայնք ունենալու համար հետևողական իրականացվում են աղբահանության աշխատանքները, որի համար համայնքապետարանը հատկացրել է 1272,00 հազ. դրամ, Կատարվել է համայնքի փողոցների լուսավորության համակարգի վերանորոգման աշխատանքներ, որի նպատակով ծախսվել է 587,4 հազ. դրամ: Համայնքի անխափան ջրամատակարարման համար 1201,8 հազար դրամ համայնքապետարանը ծախսել է խմելու ջրի նաստսների վերանորոգման աշխատանքների համար, 1000,0 հազ. դրամ ծախսվել է

ջրագծի վերանորոգման համար, 1000,0 հազ. կափարվել է կոյուղագծերի վերանորոգման աշխատանքներ: 2018թ.<<ԳԱՏՈ>> ծրագրով Առաքաշեն համայնքը ընդգրկվել է խմելու ջրագծերի անցկացման և վերակառուցման ծրագրում: Ավագանին որոշել է համայնքի բյուջեից 18000000 դրամ հատկացնել այդ աշխատանքների կափարման համար՝ որպես մասնակի վճար:

6.Կրթության, մշակույթի և երիտասարդության հետ փարվող աշխատանքների բնագավառում

Համայնքի բնակչությանը նախադպրոցական կրթության և դաստիարակության ոլորտում որակյալ ծառայությունների մատուցման համար 2018թ. համայնքապետարանը հատկացրել է 19680,4.0հազ.դրամ մանկապարտեզին՝ աշխատավարձ, սնունդ և այլ ծախսերի համար,համայքապետարանը ֆինանսավորել է մանկապարտեզի փանիքի մի մասի վերանորոգվման համար:

Համայնքում ապահովվել է մասայական միջոցառումների կազմակերպմանը, նպաստել է ավանդական մշակույթի պրոպագանդմանը: Համայնքում կազմակերպվել է միջոցառումներ՝ Մարտի 8-ի,Ապրիլի 24-ի, Մայիսի 9-ի, , դպրոցի շրջանավարտների, երեխաների պաշպանության օրվա, մանկապարտեզի հանդեսի , սեպտեմբերի 1-ի, Նոր փարվա կապակցությամբ:

72.5 հազ. դրամ հատկացվել է մարտի 8-ի և ապրիլի 7-ի կապակցությամբ համայնքապետարանի և մանկապարտեզի կին աշխատակիցներին նվերներ ձեռք բերելու համար և միջոցառման կազմակերպման համար:

2018թ. շրջանավարտներին համայնքապետարանը հատկացրել է 190.0 հազ. դրամ՝ մեկ օրյա հանգիստ Սևանում անցկացնելու համար:

Սեպտեմբերի 1-ի կապակցությամբ, համայնքապետարանի կողմից առաջին դասարանցիների նվերների համար հատկացվել է 203,3հազ. դրամ: Ամանորի կապակցությամբ համայնքի 460 երեխաներին հատկացվել է 500,0 հազ. դրամ արժողությամբ նվերներ, կազմակերպվել է միջոցառում,որի համար ծախսվել է 160,0 հազ. դրամ:

7.Սպորտի և սոցիալական ծառայության բնագավառում

Համայնքի բնակչությանը, սոցիալապես անապահով խավին, ժամանակավոր անաշխատունակության դեպքում , փրվել է ֆինանսական աջակցություն:



Համայնքապետարանը աջակցել է երիտասարդական ընդհանրություններին, զորացրված և զորակոչված զինծառայողներին տրամադրել է միանվագ դրամական օգնություն: Տրամադրված օգնությունների գումարը կազմել է 1110.0 հազ. դրամ:

#### 8. Գյուղատնտեսության բնագավառում

Համայնքն ունի զարգացած գյուղատնտեսություն, ապահովվում է անասնաբուժական ծառայություններ՝ իրականացնում է անասնահամաճարակային միջոցառումներ, որի համար հատկացվել է 383,8 հազ. դրամ:

Տարածքային վիճակագրական վարչություն է ներկայացվել ցանքաշրջանառության, պտղատու և խաղողի այգիների ստացված բերքի, առկա գյուղատնտեսական վերաբերյալ հաշվետվություններ:

Համայնքում կազմակերպվում է անասունների և թռչունների հակահամաճարակային պարվաստումներ:

#### 9. Առողջապահության բնագավառում

Համայնքապետարանը աջակցում է առաջնային բուժօգնության ծառայությանը՝ ամբուլատորիան ապահովվում է ջրամատակարարմամբ, էլեկտրա և գազամատակարարմամբ, որի համար հատկացրել է 151,5 հազ. դրամ:

#### Հիմնախնդիրներ

Առաքաշեն գյուղի հիմնական հիմնախնդիրներն են՝

1. Խմելու ջրի ջրագծի վերանորոգման հարցը:
2. Ներհամայնքային ճանապարհների և փողոցների բարեկարգման հարցը:
3. Մանկապարտեզի շենքի վերանորոգման հարցը:

Համայնքի ղեկավար՝

29 ՀՈՒՆՎԱՐԻ 2019Թ.

Գ.ԱՌԱՏԱՇԵՆ



Վ. Հարությունյան